

## ՔՐԻՍՏՈՍԻ ԵՎ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԴԱՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՃՐԴԱՎՈՐ ԸՆԹՐԻՔԻ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵջ

ԹԱՍՄԱՐՄ ԴԱՌԱՅՄԱՆ  
ԵԳՎԱ ԽԱՂՋՈՐԴ

Կա կարծիք, որ վաղ շրջանի նկարիչները դատկերել են Խորհրդավոր ընթրիքը ըստ Մատթեոսի և Մարկոսի ավետարանների, իսկ արդեն V դարից սկսած՝ նկարիչները հիմնվում են Շովիաննեսի ավետարանի վրա<sup>1</sup>:

Սրբադատկերներում Քրիստոսի կերպարն ընդգծված է և առանձնացված։ Փրկի ֆիգուրը գտնվում է սեղանի կենտրոնում կամ ամենադատվավոր տեղում։ Շուդայի կերպարը սրբադատկերներում երեմն չի դատկերվում, իսկ դատկերվելիս՝ Քրիստոսի կերպարի նման, առանձնացվում է մնացածից՝ ընդգծելով համար նրա դափանականությունը։

Դատկադես հետաքրքիր է Շոտտոյի «Շուդայի համբույրը» որմնանկարը։ Այստեղ Քրիստոսի և Շուդայի դեմքերը ներկայացնում են մարդկային տարբեր նկարագիր և արժեքներ ունեցող երկու ամճի՝ հակադրելով ստորությունը և վեհությունը, ճշճիմությունը և մեծահոգությունը։ Ամբողջ որմնանկարի հիմնական գաղափարը երկու դեմքերն են։ Կարծես դեմքերը չեն թողնում, որ ուշադրություն սևեռես որմնանկարի մյուս հատվածների վրա։ Եվ այս ամենը հեղինակի յուրահատուկ հնարքի միջոցով։ Որմնանկարի աջ կողմում դատկերված է քահանա, որը ձեռքով ցոյց է տալիս հենց Քրիստոսի դեմքը, իսկ ձախ կողմում տեսնում ենք Պետրոս առաքյալին, որը դամակով առաջ է նետվում դեռի Շուդան, և եթե հետևենք քահանայի ձեռքի և Պետրոսի դամակի ուղղություններին, աղայ կտեսնենք, որ նրանք հատվում են հենց Քրիստոսի և Շուդայի դեմքերի մոտ՝ արհեստականորեն ուշադրությունը սևեռելով հենց այս կերպարների վրա։ Դեմքերը բացարձակ տարրեր են։ Քրիստոսի դեմքը արտահայտում է բարեխիղճ, գեղեցիկ, ծերմակ, միամշանակ հերոսի կերպար, և նրան հակադրված է նախամարդու դեմք հիշեցնող Շուդայի կերպարը։ Շոտտոն շեշտում է Շուդայի ֆիզիկական տգեղությունը։ Նենց այս դեմքի շնորհիվ է, որ կենտրոնը դառնում է հոգեբանական բարդ դասի դադար։ Նենց այս դադարն է, որ հակասության և մտածելու տեղիք է տալիս։ Երկու հոգի ընդամենք այդ ամքուսի մեջ չի վիճակի են իրար հասկանալ։ Նամբույր դեռ չկա, Շուդան դեռ չի համբուրել Քրիստոսին և դա ընդամենք հետևանք է լինելու։ Դադարը, որ ստացել է Շոտտոն, իրական երկու կերպարների ներքին բացադրության դահն է, որ մինչև օրս ոչ ոք չի կարողանում հասկանալ, թե արդյոք եղե՞ղ է նախնական դայմանականական քրիստոնեական Քրիստոսի և Շուդայի միջն։ Եվ

Չոտսոն կարողանում է տալ հոգեբանական դադարի վիճակ, երկու կերպարների գաղտնի բացատրություն, մնացածն ընդամենը դետք է հետևանք լիներ այս դադարի:

Սկսած X դարից՝ Խորհրդավոր ընթրիքի ժամանակ առաջալների դասավորությունը սեղանի շուրջ արդեն ունի հստակ դատկերազրություն: Ավետարանիներից տեղեկանում ենք, որ Քրիստոսին մոտ սեղանի շուրջ գտնվել են՝ Շովիաննեալ, Պետրոսը և Հոդան: Վարկածները տարբեր են այն հարցի շուրջ, թե ինչու է Շուրջան զրադեցնում այս տեսարանում այդքան կարևոր տեղերից մեկը: Ըստ մի վարկածի՝ Քրիստոս չեր կարող հացը դարձել Շուրջային, եթե նա նստած լիներ սեղանի այլ անկյունում<sup>3</sup>: Ֆրանսիացի արքա L. Կամյոն տվել է առաջալների դասավորության դատկերը Խորհրդավոր ընթրիքի ժամանակ. Խորհրդավոր ընթրիքը տեղի է ունեցել Պ-աձև կամ D-աձև սեղանի շուրջը<sup>4</sup>: Սուայալները ընթրիքի ժամանակ հենվում էին ձախ ձեռքի վրա, որդեսզի աջը ազատ մնար:

	Անդրեաս	Շովիաննես	Հիսոս
	8	7	6
Պետրոս	9		5 Շուրջան հսկարիովտացի
Փիլիպպոս	10		4 Սիմոն Կանանացի
Բարդուղիմեոս	11		3 Թադեոս
Թովմաս	12		2 Յակոբոս Ալփյանը (Կրտսեր Յակոբոս, Ալփեոսի որդի)
Մատթեոս	13		1 Յակոբոսը (Զեբեդեոսի որդի, Որոտման որդի (Բաներեգես))

Խորհրդավոր ընթրիքի վաղքրիստոնեական տարբերակներում Քրիստոսը և աշակերտները նստած են D-աձև սեղանի շուրջ, Քրիստոսը՝ ձախ անկյունում, քանի որ սեղանի այս մասը համարվում էր ամենատափավոր տեղը: Շետագյում այս դատվավոր տեղը փոխվեց և դարձավ սեղանի կենտրոնը, քանի որ սկսեցին դատկերել ուղղանկյուն սեղան: Մասնակիցների թիվը Խորհրդավոր ընթրիքի տարբեր նկարներում տարբեր է, աշակերտների թիվը տատանվում է երկուսից մինչև յոթ, բացի տղամարդ աշակերտներից, երբեմն հանդիդում են դատկերված նաև կանայք և երեխաներ, կարող ենք հանդիդել ծառաների: Սակայն դիտարկելով այս տիպի մեկնաբանությունները՝ հարց է առաջանաւ. արդյոք գաղտնի՞ էր ընթրիքը, թե՞ ավանդական տոնական սեղան էր: Դժվար է այս հարցի դատասխանը վերջնականացնելու տակ:

Խորհրդավոր ընթրիքի վաղքրիստոնեական մեկնաբանություններից է համարվում է Ռավիննայի Սան Աղոլինարե Նուովո եկեղեցու խճանկարը:

Նրանում դատկերված է տասնմեկ աշակերտ՝ ավանդական տասներկուսի փոխարեն: Թերևս նկարիչը չի կամեցել դատկերել դավաճան Շուղային:

Քանի որ արևմտյան արվեստում ավելի հաճախ է հանդիպում Խորիքավոր ընթրիքի դատկերումն առանց Շուղայի, հարց է առաջանում՝ մասնակցե՞լ է արյոր նա ընթրիքին: Ըստ Շովիաննես ավետարանչի՝ Շուղան խորիքավոր ընթրիքի ժամանակ գնացել է, իսկ մեկ այլ վարկածով՝ Շուղան ամբողջ ընթրիքի ընթացքում ներկա է եղել<sup>5</sup>: Եթե համեմատենք ավետարանիների տեքստերը, առա ստացվում է, որ առաջին տարբերակում Շուղան ներկա է միայն Տիրոջ ոտնվային, երկրորդում նա հեռանում է անմիջապես, եթե Քրիստոս դիմում է նրան հետևյալ խոսքերով. «Արա այն, ինչ դեռ է անես», երրորդում Շուղան Վերջին՝ բաժանման գրույցի ժամանակ ներկա չի եղել: Այս հարցը միշտ քննարկման թեմա է: Շերկա գոնվե՞լ է արյոր Շուղան Նաղորդության խորիքի հաստատման ժամանակ, թե՞ո՛չ: Այն միշտ երկրնտրանքի մեջ է զցել նկարիչներին, ուստի հանդիպում են Խորիքավոր ընթրիքի մեկնաբանություններ և՝ Շուղայի մասնակցությամբ, և՝ առանց նրա: Այսդիսի օրինակներ կան նաև հայ մանրանկարչության մեջ:

Թե՛ դատկերագրական և թե՛ հորինվածքային առումով առավել հետաքրքիր է Շալլե քաղաքի համալսարանի գրադարանում դահվող ավետարանը (Շալլե, հայել. ձեռ. Շ. 1 թ-308): Զեռագրի հիշատակարանից տեղեկանում ենք, որ այն գրվել է 1224 թ. գրիշ Սարգսի կողմից, Վահրամ քահանայի դատվերով: Զեռագրում կան երկու թեմատիկ դատկերներ՝ Մկրտություն (Էջ 5ա), Խորիքավոր ընթրիք (Էջ 5բ) և շորու ավետարանիների դատկերներ (Էջ 4ա):

Խորիքավոր ընթրիքը բավականին շեղումներ ունի հայկական այլ մանրանկարների կանոնական դատկերագրությունից: Ընդհանրապես, մանրանկարիչները փորձել են դատկերագրության հնարավոր միջոցներով Ավետարանի ոգուն հարազատ ներկայացնել մարդկային հեղության ու խոնարհության այդ բացարիկ դրվագը: Դատկադես խորիմաստ է 1374-ին Սեղունի լեռան վաճրում Խաչատոր Կեսարացու դատկերագրադած Ավետարանը, որը հայտնի է «Շովիան Որոտնեցու և Գրիգոր Տաթևացու Ավետարան» անունով: Խորիքավոր ընթրիքի հետ է կաղվում նաև «քացյալ դատան» հասկացությունը: 1303-ին ստեղծված մանրանկարում «քացյալ դատանի» վերաբերյալ կա համադատասխան մակագրություն: Շիսուս Քրիստոսի զյսավերեսում գրված է՝ «Տեր Յիսուս», իսկ Շիսուսի ու Շուղայի միջև կարդում ենք. «Թացեալ դատան տայ Յուղայի»: Շուղայի զյսավերեսում նրա անունն է՝ «Յուղա», մյուս աշակերտների զյսավերեսում գրված է առավել խորիքանշական բացատրություն՝ «Յիսուս աշակերտաքը ի Վերնատունն ի սեղանն խորիքոյ»:

Նկարի մակագրությունը շեշտում է, որ հենց այս ընթրիքով հաստատվեց

Նաղորդության խորհուրդը, որի ծեսը սրբորեն կատարում են քրիստոնեական բոլոր եկեղեցիները: Դեռևս միջնադարում հայ եկեղեցու շատ գործիչներ փորձել են դարձել, յեւ ինչու Շխուս այդքան մեղմ էր վարվում Շուտայի հետ՝ իմանալով, որ նա իր մահվան դատճառն է դառնալու: Կիլիկյան մեկնիշ Բարսեղ Մաշկուրցին նշում է, յեւ հաց կիսելով իրար հետ՝ մարդիկ իրենց միջից հանում են թշնամությունը, զազաններն անգամ ընտանի են դառնում, երբ նրանց կերակրում են: Երևանի Մաշտոցյան Մատենադարանի թիվ 316 ձեռագրի (Ավետարան, XIII-XIV դդ., Արցախ) մանրանկարում Շխուս Քրիստոս և տասնմեկ առաքյալները բոլորած են սեղանի շուրջը, նրանց վերևում գրված է՝ «Վերնատուն», իսկ Շուտան դուրս է դրված Վերնատան շրջագծից, և նրա գլխավերևում գրված է՝ «Յուդա առեալ զրյատառն և ել»: Ծիսական Խորհրդավոր ընթրիքի ներքին դատկերագրման դասակարգումը բաժանվում է 4 տարրեր խմբերի: Դրանց մեջ առավել տարածվածը, իհարկե, այս տարրերակն է, որում Քրիստոս ձեռքին սկիհն է դահել, իսկ մյուս ձեռքով Սուրբ Նաղորդություն է տալիս առաքյալներին:

Խորհրդավոր ընթրիքը նկարված է անտառոր՝ կշի երկայնքով հորիզոնական դիրք ունեցող զարդարված խորանի մեջ: Շխուսը կանգնած է սեղանի աջ կողմում և զրադեցնում է կշի ողջ լայնքը, նա ավելի մեծ է, քան բոլոր դատկերված առաքյալները: Նարկ է նշել, որ առաքյալները դատկերված են միայն գլուխներով, բացառությամբ վերջինի: Այստեղ կարող ենք խոսել մի ընդհանուր դատկերագրական տիպի մասին, որը բնորոշ էր արցախյան դղրոցին: Բարդ է ասել, յեւ որ դատկերագրական տարրերակն է եղել նախօրինակ: Մի քանի հին հուշարձաններում ընթրիքը ներկայացվում է ձվածև սեղանի շուրջը, իսկ առաքյալները համաշափորեն դասավորված են վերին մասում, ինչողեւ, օրինակ՝ Ռավեննայի Սամ Արդղիմարե Շոտվոյի 493-526 թթ. խճամկարը: Նոյն վիճան դեռևս հանդիպում է X-XI դդ. որմնանկարների և մանրանկարների մեջ: Իսկ ուղղանկյուն երկար սեղաններ սկսում են դատկերվել միայն X-XI դարերում:

Ընթրիքի սեղանի երրորդ տեսակը, որն ավելի հազվադեմ է հանդիպում, լրիվ շրջանածն է: Նալլեի ձեռագրում շրջանածն սեղանի տարրերակն է, միայն թե՝ կողքից դիտված: Սեղանին դրված է մեկ ձուկ: Շխուսին շրջադատում են երեք վեցաթև քերովքներ: Այստեղ չկա ավանդական Շովհաննեսի հղումը կամ Պետրոսի շարժումը: Առանձնացված չեն նաև Շուտան, հավանաբար այն ամենածավալ ֆիգուրն է, որը դատկերված է ողջ մարմնով, ոտքերն ուղղված դեղի գետին: Ինչ վերաբերում է լրիվ շրջանածն սեղանին, աղա Լ. Ուսկադենսկու կարծիքով՝ նման սեղաններն ունեն ասիական ծագում, քանի որ Արևելքում ընդունված էին կարճ ոտքերով կլոր սեղաններ, այդ սեղանները բազմիցս հանդիպում են ասորական մատյաններում<sup>6</sup>:

Ծրջանաձև սեղանների վաղ օրինակներից մեկը 586 թ. Ռաբուլայի ավետարանի դաստիքն է: Բնորոշ է նաև Լոնդոնի Քրիտանական թանգարանի հ. Աղջ 7169 ասորական ձեռագիրը (XII-XIII դդ.): Այստեղ ևս առաքյալները դաստիքն էն ողջ հասակով, իսկ դիտակնետն ընտրված է վերևից: Կլոր սեղանները հանդիդում են նաև լատինական ձեռագրերում դեռևս 850 թ.:

Գարքիել Միլլեն դասակարգում է Խորիրդավոր ընթրիքի թեմայով դաստիքները՝ Շուդայի շարժման և առաքյալների դասավորվածության համարատասխան: Ըստ նրա՝ բյուզանդական ավանդույթին բնորոշ է Շուդայի մեկնած ձեռքը<sup>7</sup>: Շեղինակի կարծիքով՝ Թարգմանչաց Ավետարանի մանրանկարը իր հորինվածքով հարում է բյուզանդական ավանդույթին: Սակայն այստեղ կամ նաև XI-XII դդ. հոլշարձաններին բնորոշ գծեր: Կարելի է ենթադրել, որ Գրիգոր Օաղկողի կիրառած նախատիպերի մեջ կա XII դարի ինչ-որ օրինակ, քանի որ մինչև XII դարը Պետրոսի այդ շարժումը քողարկվում էր: Շենց XII դարի օրինակներին է հասուկ հետին դլանում դաստիքն երկու կողմերում ճարտարապետական կառույցների ներկայությունը:

Զված սեղանը հանդիդում է XI դարի հունական ձեռագրերում, որոնցից նշենք Փարիզի Ազգային գրադարանի թիվ 74 Ավետարանը, “Պարմայի դպատական թիվ 5 ձեռագիրը, Աթոս լեռան Դիոնիսիոսի վանքի թիվ 287 ձեռագիրը:

Փոքր Շայրի XI դարի ձեռագրերի դաստիքներում առաքյալներն ու Քրիստոսը դաստիքնում են D-աձև սեղանի շուրջ, իսկ Սուտնիի Ավետարանում կիրառվում է սեղանի ձվաձև տիպը: Դա նշանակում է, որ նրանց գեղարվեստական սկզբունքներից հնարավոր չեն քանի որ դաստիքն է թարգմանչաց Ավետարանի դաստիքը:

Ակսած XII դարից Խորիրդավոր ընթրիքի դաստիքագրության մեջ գերիշխող է դառնում ուղիղ սեղանը<sup>8</sup>: Այն դառնում է ավանդական XIII դարում: Սակայն Ռուսիմի (Ֆրիրի դաստիքարարահ, ձեռագիր 32) մոտ և Կեռան թագուհու Ավետարանում (1272 թ. Երուսաղեմ, Ար. Շակորյանց վանքի գրադարան, ձեռագիր 2563) դաստիքն է սիզմայաձև սեղանը:

Նայ մանրանկարչության մեջ ձվաձև սեղանը հայտնվում է XIV դարում՝ Թորոս Տարոնացու 1318 թ. Աստվածաշնչի մեջ, որտեղ տեսնում ենք Թարգմանչաց Ավետարանի ազդեցությունը:

Կլոր սեղանի եզակի օրինակներ են հանդիդում դղտական արվեստում և Կադադովկիայի եկեղեցիների որմնանկարներում<sup>9</sup>: Այն տարածում է գտել արևմտյան արվեստում, որի դաստիքագրության մեջ մեծ դեր են խաղացել հռոմեացի վարդետները<sup>10</sup>: Այս սեղանները ի հայտ են զալիս կառոլինգյան շրջանից, և բազմիցս հանդիդու ձվաձև նմուշները գ. Շիլերը համարում է Արևելքում տարածված դայտաձև սեղանների մասնավորագես փոփոխված տեսակը<sup>11</sup>:

Ինչ վերաբերում է կիլոսաձև սեղաններին, առաջ Ս. Իզմայլովան համարում է, որ այստեղ գործ ունենք կլոր սեղանի յուրօրինակ վերափոխման հետ<sup>12</sup>:

Եթե սեղանի ձևը Ծարգմանշաց Ավետարանում չի փոխառնվել XI-XII դդ. նմուշներից, առաջ նախօրինակ է եղել XI-XIII դդ. և կամ կառոյինզյան շրջանի որևէ դատկեր: Այստեղ ոչ միայն դատկերը արժևորվում է իր ոճական, այլև բացառիկ հազվագյուտ դատկերագրական առանձնահատկություններով: Ծերևս ունենալով որոշ գեղարվեստական և դատկերագրական աղերսներ այլ օրինակների հետ՝ Ծարգմանշաց Ավետարանի Խորհրդավոր ընթրիքը խիստ տարբերվում է իր անհատական վառ նկարագրով:

Խիստ ինքնատիղ տարբերակ է Արցախի դղյոցի ներկայացուցիչ՝ Մատենադարանի թիվ 6319 ձեռագրի Խորհրդավոր ընթրիքը: Նկարի վերին ձախ մասում նստած է Շիսու, իսկ շրջանաձև սեղանի շորջը տեղավորված են միայն առաքյալների գլուխները: Պատկերագրական այս տիպը խիստ յուրատեսակ է: Ծիկ 316 ձեռագրում ներքևի աջ անկյունում առաքյալներից առանձնացված է Շուտան: Նախորդ օրինակում դատկերված է Շիսուի ոտքերն ընկած մի կին, որի մոտ մակագրված է «Մարիամ»: Խմբից աջ կողմ ուրվագծված է մի կոնք, որի այս դեմքում նշանակում է Ոտնվան: Այլ է դատկերը թիվ 6303 ձեռագրում, որտեղ Ոտնվայի տեսարանում ճակատի ազատ տարածության մեջ ընթրիքի գաղափարը խորհրդանշող զարդարված շրջանակ է, որի վրա մակագրված է «սեղան»: Երկու անմիջական հաջորդող թեմաները միմյանց հետ միասնաբար ներկայացնելու ձևը խիստ բնորոշ է հայկական մանրանկարչությանը:

Վերածննդի դարաշրջանում Խորհրդավոր ընթրիքի թեման լայնորեն դատկերվում է որմնանկարչության մեջ: Դրանց շարքին է դատկանում 1445-1450 թվականների Մադրեա դել Կաստամիոյի ստեղծած Խորհրդավոր ընթրիքը: Պատկերված է ուղղանկյունաձև սեղան, արդեն ավանդական դարձած՝ Քրիստոսի դատկերը մեջտեղում, Քրիստոսի աջ և ձախ կողմերում մյուս առաքյալներն են, բացի Շուտայից. նրա կերպարը տեղավորված է Քրիստոսի հակառակ կողմում, այսինքն բոլորը նստած են սեղանի մի կողմում, իսկ Շուտան հակառակ կողմում՝ միայնակ: Շույն կերպ է նկարված նաև Գոմենիկո Գիրլանդայոյի Խորհրդավոր ընթրիքի տարբերակը:

Տասնմեկ աշակերտներով դատկերվող Խորհրդավոր ընթրիքի տեսարան այս շրջանում հանդիպում ենք Ալբելստ Շյուրերի 1523 թ. փորագրություններից մեկում: Պատկերված է Շովիաննեսի ավետարանի այն հատվածը, երբ Շուտան, «վերցնելով մի կտոր հաց, դուրս եկավ: Գիշեր էր և Շիսուն ասաց. այսուհետ փառարանվեց մարդու որդին և Աստված փառարանվեց Շրանում» (Շովի. 13:30-31):

Սակայն նոյն Դյուրերի մոտ կա նաև ավանդական դասկերագրությամբ՝ 12 աշակերտներով փորագրություն, որ «Մեծ շարշարանքներ» շարքից է (1510 թ.): Քրիստով խաչաձև լուսաղակով ուղղանկյուն սեղանի կենտրոնում է: Ամենաերիտասարդ աշակերտը՝ Շովիաննեսը, նրա կրօքին է: Նույան, որը ճանաշելի է դառնում ձեռքում սեղմված քսակով, նատած է դիտողին մեջքով: Դա ընդունված ձև էր, որպեսզի Շուդան հայացքով շխանդիղի դիտողի հետ: Այսեղ կարող ենք նկատել, որ Դյուրերն անդրադառնում է երկու առանձին դասկերագրական տիպի:

Այսդիսով, կարելի է եզրակացնել, որ սկսած վաղ միջնադարից մինչև Վերածնունդ՝ մեզ հետաքրքրող թեման ունեցել է երեք հիմնական դասկերագրական տիպ՝ շեղանկյուն, հորիզոնական և շրջանաձև հորինվածքներով:

- 1 И. Смирнова, *Монументальная живопись итальянского Возрождения*, М., 1987, стр. 98.
- 2 А. Майкапар, *Новый Завет в искусстве*, М., 1990, стр. 203.
- 3 М. Желтов, В. Василик, *Православная энциклопедия*, М., 2001, т. 1, стр. 214.
- 4 А. Майкапар, *Новый Завет в искусстве*, стр. 206.
- 5 А. Турчинов, *Тайная вечера*, М., 2012, стр. 514.
- 6 Л. Успенский, *Богословие иконы Православной Церкви*, М., 1989, стр. 41.
- 7 Millet G., *Recherches sur l'iconographie de l'Evangile aux XIV<sup>e</sup>, XV<sup>e</sup> et XVI<sup>e</sup> siècles d'après les monuments de Mistra, de la Macédoine et du Mont-Athos*, Paris, 1960, p. 197.
- 8 Նոյն տեղում, էջ 135:
- 9 Նոյն տեղում, էջ 147:
- 10 Նոյն տեղում, էջ 135:
- 11 Shiller G., *Iconography of Christian Art*, v.2, London, 1972, էջ 182.
- 12 Т. Измайлова, *Армянская миниатюра 11 века*, М., 1986, стр. 137.

## THE DISPOSAL OF JESUS AND APOSTLES DURING THE LAST SUPPER

TAMARA DADAYAN  
YSAFA PhD applicant

The article considers some types of compositions of the disposal of Christ and His Disciples during the Last Supper. The author investigates three principal iconographic types of location – horizontal, diagonal and round. The examples include Armenian medieval manuscripts and paintings of Renaissance artists.

### РАСПОЛОЖЕНИЯ ХРИСТА И АПОСТОЛОВ НА ТАЙНОЙ ВЕЧЕРЕ

ТАМАРА ДАДАЯН  
*Соискатель ЕГАХ*

В статье рассматривается композиционное расположение Христа и Его учеников во время Тайной вечери. Исследуются три основных иконографических типа расположения – по горизонтали, диагонально и по кругу. Примеры включают страницы армянских средневековых рукописей и произведения художников Возрождения.



1. Խորհրդավոր ըմթռիք, Ռոսսանոյի Ավետարան, VI դ.  
2. Խորհրդավոր ըմթռիք, Սան Ալոյլինարե Նուովո, V-VI դդ.





3. Լեոնարդո դա Վինչի, Խորհրդավոր ըմբռիք, Սիլան, Սանտա Մարիա դելլա Գրացիե

4. Դյուրեր, Խորհրդավոր ըմբռիք

5. Ավետարան, XIII-XIV դր., Արցախ, Մատ., հ. 316, էջ 11ա

6. Կենան թագուհու Ավետարան, 1272 թ., Երուսաղեմ, հ. 2563, էջ 166ա





7



8



9

7. Ավետարան, 1306 թ., ծաղկող՝ Յովսիան  
8. Ավետարան, 1038 թ., Մատ., հ. 6201.  
9. Թարգմանչաց Ավետարան, 1232 թ.,  
ծաղկող՝ Գրիգոր